

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԸ /ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ/
ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՅՈՒՅԹ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների
պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ
/ծածկագիր՝ 64-3.1-14/**

Բաժնի վարիչի հանձնարարությամբ, համագործակցում է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող հանրակրթական դպրոցների և երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների և Ոստիկանության հետ, կատարում է տուն-այցեր կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների, այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ուսումնասիրման նպատակով, մասնակցում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների կարիքների գնահատման իրականացման աշխատանքներին, իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց հաշվառումը, գենդերային հիմնահարցերի ուսումնասիրումը և մասնակցում է դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակմանը, մասնակցում է Մարզում կանանց առքուվաճառքի (թրաֆիքինգի) հիմնահարցերի ուսումնասիրմանը և դրանց լուծմանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներին, մասնակցում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին մանկատուն կամ երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատություն կամ խնամատար ընտանիք տեղավորելու համար եզրակացության կազմման աշխատանքներին, մասնակցում է ոստիկանության անչափահասների գործերով զբաղվող ծառայությունների հետ համատեղ մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների տեղավորման, կողմնորոշման խնդիրների քննարկմանը, անչափահասների իրավունքների և շահերի պաշտպանությանը, ուսումնասիրում է որդեգրող ցանկացող քաղաքացուց, ինչպես նաև խնամատար ծնող դառնալու ցանկություն հայտնած անձից ստացած բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը և կազմում նրանց կենսապայմանների համապատասխան ակտ.

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար պահանջվում է՝

- ունի հոգեբանություն կամ մանկավարժություն և հոգեբանություն կամ հատուկ հոգեբանություն, կամ շտկող մանկավարժություն և հատուկ հոգեբանություն /նախադպրոցական/ մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության պաշտոններում, կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն մեկ տարվա ստաժ, կամ վերջին հինգ տարվա ընթացում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ

կամ առնվազն երկու տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

- սույն պաշտոնների անձնագրերի 10-րդ կետի „բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,

Մրցույթը կանցկացվի „25,, փետրվարի 2015թ. ժամը՝11⁰⁰-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի շենքում /բ. Գավառ Կենտրոնական Հրապարակ 7/

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/.

- տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմ/ների/, վկայական/ների/, աշխատանքային գրքույկի /վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից/ պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.

- մեկ լուսանկար 3.4 չափսի.

- անձնագրի պատճենը:

ՀՀ քաղաքացին մրցութին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր:

ՀՀ քաղաքացիները մրցութին ներկայանում են անձնագրի, դիպլոմի, աշխատանքային գրքույկի, իսկ արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի բնօրինակներով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10⁰⁰-ից մինչև 13⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է << 4 >> փետրվարի 2015թ.:

Մրցութին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ /բ.Գավառ, Կենտրոնական Հրապարակ 7, հեռ. 0264-2-43-39/: